ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 հունիսի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

76
(3285)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԱՅՍՕՐ ԿԳՆԱ ԱԺ

Այսօր՝ հունիսի 16-ին, մեկնարկում է Ազգային Ժողովի ութերորդ գումարման տասնմեկերորդ՝ փաստացի վերջին հերթական նստաշրջանը, եւ հենց առաջին օրակարգային հարցերից մեկը լինելու է Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկումը: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց Ազգային Ժողովի պաշտոնական օրակարգը եւ պարզեց, որ իշխանության համար առանցքային նշանակություն ունեցող այս քննարկմանը մասնակցելու է նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Թեեւ հիմնական զեկուցող է նշանակվել ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, սակայն բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկումը ավանդաբար անցկացվում է վարչապետի մասնակցությամբ, քանի որ այն վերաբերում է կառավարության ամբողջ տարվա գործունեության ֆինանսական արդյունքներին: Հատկանշական է, որ խորհրդարանական ընտրությունների ավարտից անմիջապես հետո Նիկոլ Փաշինյանը կառավարության նիստ էր հրավիրել, որի առանցքային թեմաներից մեկը հենց 2025 թվականի բյուջեի կատարողականն էր: Իսկ այժմ նույն հաշվետվությունը ներկայացվում է Ազգային Ժողով՝ քաղաքական գնահատականի արժանանալու համար:

«Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ Ազգային Ժողով ներկայացված նախագծով առաջարկվում է հաստատել 2025 թվականի պետական բյուջեի կատարողականը հետեւյալ ցուցանիշներով.

եկամուտներ՝ 2 տրիլիոն 886 միլիարդ 547 միլիոն դրամ,
ծախսեր՝ 3 տրիլիոն 305 միլիարդ 306 միլիոն դրամ,
բյուջեի դեֆիցիտ՝ 418 միլիարդ 759 միլիոն դրամ:

Փաստացի, կառավարությունը խորհրդարանից ցանկանում է ստանալ քաղաքական հավանություն մի բյուջեի համար, որն ավարտվել է ավելի քան 418 միլիարդ դրամի պակասուրդով:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Քաղաքական կուլիսներում շարունակվում են քննարկումները այն մասին, թե իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակում ընդգրկված որ թեկնածուներն են շարունակում մնալ մանդատի սպասման փուլում: Ինչպես տեղեկացնում է Armlur.am-ը, թեեւ մի շարք գործիչներ ընդգրկված են եղել ՔՊ-ի նախընտրական ցուցակում, սակայն այս նստաշրջանում նրանց հերթը դեռեւս չի հասնում, եւ նրանք պատգամավորական մանդատ չեն ստանալու: Խոսքը վերաբերում է Էմմա Պալյանին, Հերիքնազ Տիգրանյանին, Անուշ Քլոյանին, Արտյոմ Մեհրաբյանին, Շիրակ Թորոսյանին, Գուրգեն Մելքոնյանին, Էսթեր Այվազյանին, Միքայել Թումանյանին, Մարինա Ղազարյանին, Տիգրան Պարսիլյանին, Արմենուհի Ղազարյանին եւ Վանիկ Օհանյանին: Փաստորեն, թեեւ նշված անձինք շարունակում են մնալ իշխող ուժի քաղաքական ռեզերվում եւ ընդգրկված են կուսակցության ընտրական ցուցակում, սակայն Ազգային Ժողովում նրանց հայտնվելու հեռանկարը առայժմ հետաձգվում է: Իսկ թե առաջիկայում ՔՊ խմբակցությունում հնարավոր տեղաշարժեր կլինեն, որոնք կարող են փոխել մանդատների բաշխման հերթականությունը, դեռեւս մնում է բաց հարց: Այսպիսով, ՔՊ նախընտրական ցուցակի մի շարք ներկայացուցիչներ շարունակում են սպասել իրենց քաղաքական հերթին, մինչդեռ խորհրդարանում ուժերի ներկա դասավորությունը էական փոփոխությունների չի ենթարկվում:

ՀՀ կառավարությունը հանրային քննարկման է ներկայացրել որոշման նախագիծ, որով նախատեսվում է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում կառուցել խոշոր կրթահամալիր՝ համագործակցելով Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հետ: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է փաստաթուղթը, ըստ որի՝ ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2026-2029 թվականներին եւ ներառում է հանրակրթական դպրոց, մանկապարտեզ եւ երեխաների համայնքահեն ցերեկային կենտրոն: Նախագծով կրթահամալիրի կառուցման հիմնական ֆինանսական եւ կազմակերպչական բեռը դրվում է մասնավոր գործընկերոջ՝ Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի վրա, որը պետք է իրականացնի ինչպես նախագծման, այնպես էլ շինարարության եւ հետագա շահագործման հիմնական փուլերը: Պետությունը, իր հերթին, մասնակցում է համաֆինանսավորմամբ՝ հիմնականում դպրոցի կառուցման որոշ մասի եւ հետագա շահագործման ծախսերի փոխհատուցման ձեւով: Ըստ նախագծի՝ պետական բյուջեից փոխհատուցումները կարող են հասնել մոտ 1.67 մլրդ դրամի: Իսկ ի՞նչ կառույց է սա եւ ինչո՞վ է զբաղվում: Սա մի շարք հարցերի տեղիք է տալիս:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

2026 թվականի փետրվարի 7-ից՝ Ազգային Ժողովի հերթական ընտրությունների գործընթացի մեկնարկից առ այսօր, դատախազները հաստատված մեղադրական եզրակացությամբ իրավասու դատարան են հանձնել ընտրական հանցագործությունների վերաբերյալ 17 քրեական վարույթ՝ 60 անձի վերաբերյալ, որոնցից 12 քրեական վարույթ՝ 51 անձի վերաբերյալ, դատարան է հանձնվել ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների կողմից: Այդ քրեական վարույթներն են՝ 2 դրվագ ընտրակաշառք տալու համար մեղադրվող 1 անձի եւ ընտրակաշառք ստանալու համար մեղադրվող 2 անձի վերաբերյալ 1 քրեական վարույթ, 3 դրվագ ընտրակաշառք տալու ու բարեգործության արգելքը խախտելու եւ ընտրակաշառք ստանալու համար մեղադրվող 5 անձի վերաբերյալ 1 քրեական վարույթ, բարեգործության արգելքը խախտելու եւ դրան օժանդակելու համար մեղադրվող 2 անձի վերաբերյալ 1 քրեական վարույթ, ընտրակաշառք տալու, 2 դրվագ հավաքին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելու համար մեղադրվող 1 անձի եւ խմբով ընտրակաշառք ստանալու համար մեղադրվող 1 անձի վերաբերյալ 1 քրեական վարույթ...

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՆՔ ՊԱՅՔԱՐԸ»

ArmLur.am-ը զրուցել է «Մայր Հայաստան» կուսակցության վարչության անդամ Արեգնազ Մանուկյանի հետ:

- Տիկին Մանուկյան, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դիմաց բողոքի ակցիա է անցկացնում, որին միացել են նաեւ այլ քաղաքական ուժեր: Ի՞նչ եք պահանջում՝ վերաքվեարկությո՞ւն, թե՞ ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչում:

- Մեր պահանջն այն է, որ հայրենիքի գողերը չդառնան նաեւ ձայնագողեր: Մեր համոզմամբ՝ իշխանությունները գողանում են քաղաքացիների քվեները եւ կեղծում ընտրությունների արդյունքները, որպեսզի Ազգային Ժողովում ապահովեն իրենց անհրաժեշտ մեծամասնությունը: Մենք պահանջում ենք, որ յուրաքանչյուր ընտրողի ձայն հաշվարկվի եւ արտացոլվի իրական արդյունքներում:

- Այսինքն՝ պայքարում եք պակասող ձայների վերականգնման համա՞ր:

- Այո՛: Եթե քաղաքացին գնացել է ընտրատեղամաս եւ իր ձայնը տվել է որեւէ քաղաքական ուժի, այդ ձայնը պետք է իրացվի, ոչ թե փոշիացվի: Բացի այդ, ընտրախախտումները ազդում են խորհրդարանի կազմի եւ քաղաքական գործընթացների վրա, ուստի մենք պայքարում ենք նաեւ այդ անօրինականությունների դեմ:

-Դատարանը, սակայն, մերժեց ձեր երկու բողոքները: Ինչպե՞ս եք գնահատում այդ որոշումը:

- Մենք ակնկալում էինք օրենքի հիման վրա կայացված որոշում, սակայն դատարանը, մեր գնահատմամբ, քաղաքական որոշում է կայացրել: Այնուամենայնիվ, դատարանը նշել է, որ ԿԸՀ-ն ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու դեպքում պարտավոր է կազմակերպել վերաքվեարկություն:

- Ընտրությունների արդյունքները Ձեզ հիասթափեցնո՞ւմ են:

- Ո՛չ: Մենք շարունակելու ենք պայքարը: Մեր համոզմամբ՝ այսօր քննարկվում է Հայաստանի ապագայի հարցը, եւ մենք հետքայլի տեղ չունենք: Մեր նպատակն է թույլ չտալ, որ քաղաքացիների քվեները կեղծվեն կամ գողացվեն:

- Օրերս Ձեր բնակարանում խուզարկություն իրականացվեց: Ի՞նչ կարող եք հայտնել այդ գործի վերաբերյալ:

- Այս պահին իմ կարգավիճակում փոփոխություն չկա: Առգրավվել են որոշ տեխնիկական միջոցներ, որոնք դեռ չեն վերադարձվել: Գործի նյութերին ծանոթանալուց հետո կարող եմ ասել, որ այն, մեր գնահատմամբ, որեւէ լուրջ բովանդակություն չի պարունակում: Սակայն նախաքննության գաղտնիության պատճառով մանրամասներ հրապարակել չեմ կարող:

- Ունե՞ք մտավախություն, որ կարող եք կալանավորվել:

- Այս պայքարի մեջ ներգրավված յուրաքանչյուր մարդ վաղուց պատրաստ է ցանկացած զարգացման: Ոչինչ բացառել չի կարելի: Մենք տեսնում ենք, որ իշխանությունների գործողությունները գնալով ավելի կոշտ են դառնում, ուստի ցանկացած սցենար հնարավոր է:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՎԵՐԱՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՉՊԵՏՔ Է ՆՇԱՆԱԿՎԻ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որեւէ տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուց հետո չպետք է ավտոմատ կերպով նշանակի վերաքվեարկություն: Այս մասին ասված է ՀՀ ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանի տարածած հայտարարության մեջ:

«ԿԸՀ-ն այդ որոշումը կայացնելիս պետք է հաշվի առնի ընտրողների իրական կամքի պաշտպանությունը եւ ընտրությունների արդյունքի օրինականության ապահովումը: Այդ պատճառով ԿԸՀ-ն պետք է ընտրի այն միջոցը, որը տվյալ պայմաններում անհրաժեշտ է, համաչափ է եւ չի առաջացնում ավելի մեծ աղավաղում, քան այն խախտումը, որի հետեւանքը պետք է վերացվի: Մասնակի վերաքվեարկության դեպքում առաջանում է հետեւյալ խնդիրը: Հիմնական քվեարկությանը մասնակցած ընտրողները քվեարկել են այն պահին, երբ ընդհանուր արդյունքը հայտնի չէր: Նրանք չգիտեին՝ ով է առաջատար, քանի ձայնի տարբերություն կա, որ ուժը կհաղթահարի շեմը կամ իրենց քվեն ինչ ազդեցություն կունենա վերջնական արդյունքի վրա: Մինչդեռ վերաքվեարկության մասնակից ընտրողները քվեարկելու են արդեն այլ իրավիճակում. նրանց համար կարող է հայտնի լինել ընդհանուր պատկերը (տվյալ դեպքում ընտրությունների մասնակիցների 99,8 տոկոս):

Այս պայմաններում ընտրողի կամքը կարող է ձեւավորվել ոչ թե իր սկզբնական քաղաքական նախապատվությամբ, ազատ կամարտահայտությամբ, այլ արդեն հայտնի արդյունքը խմբագրելու հաշվարկով: Այս ռիսկը սովորաբար բնութագրվում է որպես տակտիկական քվեարկություն (tactical voting):

Վենետիկի հանձնաժողովը եւս ընդունել է, որ մասնակի վերաքվեարկությունը միշտ չէ, որ պատշաճ միջոց է: 2025 թվականի հրատապ զեկույցում նշվում է, որ եթե խախտումները վերաբերում են միայն որոշ տեղամասերի, ապա արձագանքը սկզբունքորեն կարող է սահմանափակվել այդ տեղամասերով: Սակայն նույն մոտեցումը ունի կարեւոր բացառություն. մասնակի վերաքվեարկությունը չի կարող պատշաճ միջոց լինել, եթե այդ տեղամասերում նոր քվեարկությունը, տակտիկական քվեարկության (tactical voting) հնարավորության պատճառով, չի երաշխավորի արդար ընտրական արդյունք:

Հավասար ընտրական իրավունքի տեսանկյունից եւս խնդիրը ակնհայտ է: Վերաքվեարկությունը կարող է խախտել ընտրողների հավասարությունը, քանի որ ընտրողների մեկ խումբը հայտնվում է մյուսներից էապես տարբեր ելակետային պայմաններում: Այս հարցում կարեւոր է նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի մոտեցումը, ըստ որի՝ ընտրական խախտումների հետեւանքները գնահատելիս պետք է պաշտպանել նաեւ այն ընտրողների իրավունքները, որոնք իրենց ընտրությունը կատարել են օրինական ճանապարհով: Եթե հիմնական քվեարկությանը մասնակցած ընտրողների կամքն արդեն օրինական ձեւով արտահայտվել է, ապա հետագա վերաքվեարկությունը չպետք է երկրորդային եւ հաշվարկված ազդեցություն ունենա այդ կամքի վրա: Հետեւաբար ԿԸՀ-ն վերաքվեարկություն նշանակելու հարցում պետք է հաշվի առնի նաեւ, թե արդյո՞ք վերաքվեարկության ժամանակ ապահովվելու է նույն ազատ եւ հավասար միջավայրը, ինչ հիմնական քվեարկության օրը: Արդյո՞ք հայտնի արդյունքը չի ստեղծում տակտիկական քվեարկության ռիսկ: Արդյո՞ք չեն խաթարվի արդեն օրինական քվեարկած ընտրողների իրավունքները: Արդյո՞ք ապօրինի կամ կոռուպցիոն ազդեցության աղբյուրները չեզոքացված են:

Եթե այս հարցերի պատասխանը ցույց է տալիս, որ վերաքվեարկությունը չի ապահովելու ազատ, հավասար եւ արդար արդյունք, ապա այն չպետք է նշանակվի: Վերաքվեարկություն չնշանակելը նման դեպքում չի նշանակում խախտումը անտեսել: Դա նշանակում է չընտրել այնպիսի միջոց, որը կարող է ավելի խորացնել ընտրողների կամքի աղավաղումը:

ԿԸՀ-ն պետք է առաջնորդվի ոչ թե մեխանիկական վերաքվեարկության տրամաբանությամբ, այլ Սահմանադրությամբ երաշխավորված ազատ եւ հավասար ընտրության, համաչափության եւ ընտրողների իրական կամքի պաշտպանության սկզբունքներով՝ որպես Սահմանադրությամբ ընտրությունների օրինականությունը վերահսկող անկախ մարմին»:

ՈՎՔԵՐ ՄԱՆԴԱՏ ԿՍՏԱՆԱՆ

ArmLur.am-ը ներկայացնում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 64 պատգամավորի անունները: Տեղեկացնենք, որ ՔՊ նախընտրական ցուցակում ընդգրկված կառավարության անդամները կառավարության կազմ վերադառնալու պարագայում նշված անձինք կստանան պատգամավորական մանդատ: Նշենք նաեւ, որ ըստ օրենքի՝ ցուցակի յուրաքանչյուր 3-րդը պետք է կին լինի:

1. Ռուբեն Ռուբինյան
2. Վահագն Ալեքսանյան
3.Ալխաս Ղազարյան
4.Հայկ Կոնջորյան
5.Ալեն Սիմոնյան
6. Արուսյակ Ջուլհակյան
7.Արմեն Խաչատրյան
8.Արթուր Հովհաննիսյան
9. Լիլիթ Մակունց
10.Վիլեն Գաբրիելյան
11.Արման Եղոյան
12.Հասմիկ Հակոբյան
13.Սասուն Միքայելյան
14. Սիսակ Գաբրիելյան
15.Արուսիկ Մանավազյան
16.Բաբկեն Թունյան
17.Լեւոն Լեւոնյան
18.Սոնա Ղազարյան
19.Նարեկ Գրիգորյան
20 Հակոբ Սիմիդյան
21. Ջարուհի Բաթոյան
22.Վահե Ղալումյան
23. Սարիկ Մինասյան
24.Նազելի Բաղդասրյան
25.Սերգեյ Բագրատյան
26. Վաղարշակ Հակոբյան
27.Տաթեւիկ Գասպարյան
28.Սարգիս Խանդանյան
29.Միքայել Խաչատրյան
30.Արաքսյա Վարդանյան
31.Տրդատ Սարգսյան
32.Լյուդվիգ Գյուլնազարյան
33.Քնարիկ Հարությունյան
34.Անդրանիկ Քոչարյան
35.Սուրեն Հովհաննիսյան
36.Արփինե Դավոյան
37.Վլադիմիր Խաչատրյան
38.Նարեկ Ղահրամանյան
39.Միլադա Հովհաննիսյան
40.Կարեն Համբարձումյան
41. Տարոն Չախոյան
42.Լուսինե Բաղալյան
43.Նարեկ Բաբայան
44.Վալոդյա Հակոբյան
45.Լիլիթ Մինասյան
46.Արամ Խաչատրյան
47. Գոռ Արշակյան
48.Մարիամ Պողոսյան
49.Տիգրան Գալստյան
50. Ռոման Համբարձումյան
51. Ծովինար Վարդանյան
52.Էդուարդ Աղաջանյան
53. Էդգար Առաքելյան
54.Նատալյա Սինորյան
55.Արմեն Առաքելյան
56. Խաչատուր Աթաբեկյան
57.Թագուհի Ղազարյան
58.Էդգար Հակոբյան
59. Վլադիմիր Կիրակոսյան
60.Լիլիթ Ստեփանյան
61. Արազ Պապիկյան

Եւ երեք պատգամավորական մանդատ կստանան ազգային փոքրամասնության ներկայացուցիչները՝

62.Ռուստամ Բաքոյան
63.Ալեքսեյ Սանդիկով
64.Կնյազ Հասանով

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ԵՄ–ՈՒՄ ՔՆՆԱՐԿՎՈՒՄ Է

Եվրամիության անդամ երկրները քննարկում են ԵՄ արտաքին գործողությունների ծառայության (EEAS) խորը բարեփոխման տարբերակներ՝ կառույցի արդյունավետության վերաբերյալ քննադատությունների ֆոնին, հայտնում է Financial Times-ը՝ հղում անելով աղբյուրներին: Քննարկումների կենտրոնում հայտնվել է ԵՄ արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Կայա Կալլասը, որի լիազորությունների հնարավոր սահմանափակումը դիտարկվում է որպես բարեփոխման տարբերակներից մեկը:

Ըստ աղբյուրների՝ մի շարք եվրոպական պետություններ քննարկում են ոչ միայն EEAS-ի կառուցվածքային փոփոխությունները, այլեւ նրա ղեկավարի վերահսկողական գործառույթների թուլացումը, այդ թվում՝ ԵՄ ներկայացուցչությունների նկատմամբ ազդեցության սահմանափակումը:

Նշվում է, որ որոշ առաջարկների շրջանակում դիտարկվում է նաեւ արտաքին դիվանագիտական ծառայության գործառույթների մի մասի փոխանցումը ԵՄ անդամ երկրներին:

Փորձագետների գնահատմամբ՝նման քայլերը կարող են էապես փոխել ԵՄ դիվանագիտական համակարգի ներկայիս կառուցվածքը: Միաժամանակ ընդգծվում է, որ բարեփոխումների կողմնակիցները դրանք ներկայացնում են որպես բյուրոկրատիայի կրճատման եւ կառավարման արդյունավետության բարձրացման միջոց:

ԻՆՉ Է ԱԿՆԿԱԼՎՈՒՄ

Եվրահանձնաժողովը ողջունում է ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ համաձայնագիրը եւ դրանից ակնկալում է Հորմուզի նեղուցի անհապաղ բացում, անցման վճարների վերացում, ինչպես նաեւ Իրանի միջուկային եւ հրթիռային ծրագրերի դադարեցում: Այս մասին X սոցիալական ցանցում գրել է Եվրահանձնաժողովի ղեկավար Ուրսուլա ֆոն դեր Լայենը:

«Ես ողջունում եմ ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ համաձայնագիրը, որը կնքվել է մի շարք գործընկեր երկրների ակտիվ դիվանագիտական ջանքերի հիման վրա: Այս համաձայնագիրը պետք է թույլ տա անհապաղ վերաբացել Հորմուզի նեղուցը: Նավագնացության ազատությունը պետք է վերականգնվի անվճար հիմունքներով: Սա էական է տարածաշրջանային կայունության եւ համաշխարհային տնտեսության համար: Այն դուռ է բացում Մերձավոր Արեւելքում խաղաղության եւ անվտանգության վերաբերյալ ավելի լայն բանակցությունների համար: Եվ պետք է վերջ դնի Իրանի միջուկային եւ բալիստիկ ծրագրերին ու տարածաշրջանում նրա ապակայունացնող գործունեությանը»,- գրել է Լայենը: Նա նաեւ կոչ է արել բոլոր կողմերին հարգել Լիբանանի ինքնիշխանությունը: «Եւ, իհարկե, Մերձավոր Արեւելքում խաղաղություն չի կարող լինել, քանի դեռ Լիբանանը կրակի մեջ է: Եվրոպան կրկին կոչ է անում բոլոր կողմերին հարգել Լիբանանի ինքնիշխանությունը եւ տարածքային ամբողջականությունը եւ իրականացնել անկեղծ զինադադար»,- նշել է նա:

ԱԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹԸ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔԸ» ԿԴԱՌՆԱ ԿԱՐԵՎՈՐ ՄԱՍ

Ադրբեջանը հեռեւողական եւ վճռական քաղաքականություն է իրականացնում տարածաշրջանում երկարաժամկետ խաղաղության եւ կայունության ձեւավորման եւ դահիճանման նպատակով, հայտարարել է Ալիեւը օկուպացված Արցախում ընթացող զգաստաժողովի ժամանակ: Այս մասին նա նշել է Շուշիում անցկացված «Գլոբալ անվտանգության մեջ տարածաշրջանային ներդրումը. խաղաղաշինությունը Հարավային Կովկասում» թեմայով միջազգային համաժողովի մասնակիցներին ուղղված իր ուղերձում:

Ալիեւի խոսքով՝ անցած տարի Վաշինգտոնում Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների միջեւ ստորագրված համատեղ հռչակագիրը, որը տեղի է ունեցել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ներկայությամբ, ինչպես նաեւ խաղաղության համաձայնագրի նախաստորագրումը, էապես փոխել են իրավիճակը Հարավային Կովկասում: Նա ընդգծել է նաեւ, որ այս համատեքստում իրականացվող այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքը» կապելու է Ադրբեջանի մայրցամաքային մասը Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության հետ եւ կդառնա Միջին միջանցքի կարեւոր բաղադրիչներից մեկը:

Հիշեցնենք, որ երեկ օկուպացված Շուշիում մեկնարկել է «Տարածաշրջանի ներդրումը գլոբալ անվտանգության մեջ. խաղաղաշինությունը Հարավային Կովկասում» խորագրով միջազգային համաժողովը, որը կազմակերպվել է Ադրբեջանի իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցության կողմից:

Համաժողովի օրակարգում ընդգրկված են մի շարք պանելային քննարկումներ՝ խաղաղաղության, տնտեսական համագործակցության, միջսահմանային նախագծերի եւ հետպատերազմական վերականգնման թեմաներով: Միջոցառմանը մասնակցում են տարբեր երկրների քաղաքական եւ դիվանագիտական շրջանակների ներկայացուցիչներ:

Նշենք, որ 2020 թվականի պատերազմից եւ ուժի կիրառմամբ ստատուս քվոյի փոփոխությունից հետո նմանատիպ միջազգային միջոցառումների եւ համաժողովների անցկացումը Արցախում դարձել է հաճախակի երեւույթ, ինչը կարելի է դիտարկվում է որպես քաղաքականության մաս՝ նոր իրողությունների լեգիտիմացման եւ միջազգային ընկալման ձեւավորման ուղղությամբ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՄՆ–Ն ՈՒ ԻՐԱՆԸ ՀՈՒՇԱԳԻՐ ԿՏՈՐԱԳՐԵՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Միացյալ Նահանգներն ու Իրանը համաձայնության են եկել փոխըմբռնման հուշագրի շուրջ, որը նախատեսում է ավարտել ավելի քան 100 օր շարունակվող պատերազմը: Պաշտոնական ստորագրումը նախատեսված է հունիսի 19-ին Ժնեւում:

Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղարությունը հայտնել է, որ ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ ռազմական գործողությունները կդադարեցվեն բոլոր ճակատներում, այդ թվում՝ Լիբանանում, իսկ Իրանի դեմ կիրառվող ծովային շրջափակումը կվերացվի:

«Պատերազմն ու ռազմական գործողությունները բոլոր ուղղություններով անմիջապես եւ մշտապես դադարեցվում են այս գիշերվանից»,- ասվում է հայտարարության մեջ:

Դոնալդ Թրամփը Truth Social-ում գրառմամբ նշել է, որ համաձայնագիրը կբերի խաղաղություն եւ անվտանգություն ողջ տարածաշրջանին:

«Իրանի Իսլամական Հանրապետության հետ գործարքն այժմ ավարտված է: Ես լիովին թույլատրում եմ Հորմուզի նեղուցի բացումը բոլոր նավերի համար եւ Միացյալ Նահանգների ծովային շրջափակման անհապաղ վերացումը»,- գրել է նա:

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսն էլ հայտարարել է, որ հրադադարը կարող է «նոր դարաշրջան» բացել Մերձավոր Արեւելքի համար՝ընդգծելով, որ Վաշինգտոնի հիմնական նպատակներից մեկն այն է, որպեսզի Իրանը երբեք միջուկային զենք չունենա:

Իրանի փոխարտգործնախարար Քազեմ Ղարիբաբադին հայտնել է, որ վերջնական համաձայնագրի շուրջ բանակցությունները կշարունակվեն 60 օր եւ կախված կլինեն նրանից, թե արդյոք ԱՄՆ-ն կկատարի ստանձնած պարտավորությունները:

Պակիստանի վարչապետ Շեհբազ Շարիֆը, որի երկիրը Քաթարի հետ միասին միջնորդել է Վաշինգտոնի եւ Թեհրանի միջեւ բանակցությունները, հայտարարել է, որ կողմերը համաձայնել են «ռազմական գործողությունների անհապաղ եւ մշտական դադարեցմանը»:

Իրանական Mehr գործակալության փոխանցմամբ՝ համաձայնագրի նախագծում ներառված է 14 կետ: Դրանց թվում են ռազմական գործողությունների դադարեցումը, Հորմուզի նեղուցի վերաբացումը, ԱՄՆ-ի կողմից Իրանի շուրջ տեղակայված ուժերի դուրսբերումը, ինչպես նաեւ Իրանի սառեցված 24 միլիարդ դոլարի ակտիվների ազատումը:

Միաժամանակ հաղորդվում է, որ Իրանի հրթիռային ծրագրին եւ տարածաշրջանային դաշնակից խմբավորումներին վերաբերող հարցերը հանվել են բանակցային օրակարգից:

Քաթարի եւ Պակիստանի իշխանությունները ողջունել են ձեռք բերված պայմանավորվածությունը՝ այն գնահատելով որպես կարեւոր քայլ տարածաշրջանային կայունության եւ տնտեսական զարգացման ուղղությամբ:

Ա. Վ.

ԿԱՅՑԵԼԻ ԵՐԵՎԱՆ

Մենք ֆինանսական օգնություն կտրամադրենք եւ կօգնենք հեշտացնել Հայաստանի առեւտուրը հարեւանների եւ Եվրոպայի հետ: Այս մասին X-ի իր էջում գրել է ԵՄ ընդլայնման հարցերով եվրոպական հանձնակատար Մարթա Կոսը՝նշելով, որ հուլիսի 5-ին այցելելու է Երեւան: «Ռուսաստանը շարունակում է ուժեղացնել ճնշումը Հայաստանի վրա՝ փորձելով շեղել երկիրը վերջին ընտրություններում ժողովրդի կատարած ժողովրդավարական ընտրությունից: Ես հանդիպեցի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի հետ վաղվա Արտաքին գործերի խորհրդի նիստից առաջ, որտեղ մենք անդամ պետությունների հետ կքննարկենք Հայաստանին շարունակական աջակցություն ցուցաբերելու եւ մեր համերաշխությունը ցույց տալու հարցերը: Մենք ֆինանսական օգնություն կտրամադրենք եւ կօգնենք հեշտացնել Հայաստանի առեւտուրը հարեւանների եւ Եվրոպայի հետ: Հուլիսի 5-ին ես կայցելեմ Երեւան՝ կոնկրետ քայլերն առաջ մղելու համար»,- գրել է Կոսը:

490 ՏՈՆՆԱ ՅՈՐԵՆ

Ադրբեջանական լրատվականները հաղորդում են, որ Ադրբեջանի տարածքով տարանցմամբ Ռուսաստանից Հայաստան կկատարվի հերթական մատակարարումը: Հունիսի 16-ին Բալաջարի կայարանից դեպի Բյոյուք-Քյասիկ կայարան կուղարկվի 7 վագոն՝ընդհանուր 490 տոննա ցորենով բեռ, հաղորդում է Trend-ը: Նշվում է, որ մինչ այժմ Ռուսաստանից Հայաստան՝ Ադրբեջանի տարածքով, տեղափոխվել է ավելի քան 29 հազար տոննա հացահատիկ, ավելի քան 6 հազար տոննա պարարտանյութ, 133 տոննա ալյումին եւ 68 տոննա հնդկացորեն: Հիշեցվում է նաեւ, որ տարանցումից բացի Ադրբեջանի տարածքով Հայաստան են արտահանվում նաեւ նավթամթերքներ: Մինչ այժմ Ադրբեջանից Հայաստան է արտահանվել ավելի քան 12 հազար տոննա դիզելային վառելիք, 979 տոննա AI-92 բենզին եւ 2955 տոննա AI-95 բենզին:

ՎԱՆԴԱԼԻԶՄ

ՈՐԴՈՒ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Քրեական եւ համայնքային ոստիկանները բացահայտել են Գյումրու «Մայր Հայաստան» հուշահամալիրի հուշարձաններից ոսկեգույն տառերը պոկելով վնասելու դեպքը. 41-ամյա տղամարդը ձերբակալվել է:

Հունիսի 11-ին Գյումրի քաղաքի Ղարսի խճուղում գտնվող «Մայր Հայաստան» հուշահամալիրի «Հերոս քաղաքների» հուշարձանների ոսկեգույն տառերը պոկելով վնասելու դեպքի առթիվ համայնքային ոստիկանության Մուշի բաժնում կազմված փաստաթղթերը փոխանցվել էին Շիրակի մարզային քննչական վարչություն, որտեղ նախաձեռնվել էր քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Քրեական ոստիկանության գլխավոր եւ Շիրակի մարզային վարչությունների, ինչպես նաեւ համայնքային ոստիկանության Մուշի ու Կումայրիի բաժինների ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական ծավալուն ու համակարգված միջոցառումների արդյունքում հունիսի 14-ին ստացվել են հավաստի տեղեկություններ, որ հունիսի 9-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, հուշարձանների տառերը պոկել է Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի բնակիչ 41-ամյա տղամարդը: Նույն օրը՝ ժամը 8:40-ին, նա հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է ՔՈԳՎ Շիրակի մարզային վարչություն, որտեղ խոստովանել է կատարածը:

Shamshyan.com-ը հայտնել էր, որ 41-ամյա տղամարդն ու կազմված փաստաթղթերը ներկայացվել են Շիրակի մարզային քննչական վարչություն: Կասկածյալը աշխարհահռչակ ծանրորդ, Օլիմպիական խաղերի, Եվրոպայի եւ աշխարհի չեմպիոն, երջանկահիշատակ Յուրի Վարդանյանի քրոջ որդին է:

Նկատենք, որ 2026 թվականի մայիսի 25-ին Նիկոլ Փաշինյանը Գյումրիում էր: Յուրի Վարդանյանի քույրը, որի որդին այս պահին կասկածվում է վանդալիզմի մեջ, անձամբ մոտեցել էր վարչապետին եւ շնորհակալություն հայտնել: Եւ ահա, շնորհակալությունից մոտ մեկ ամիս անց որդին կասկածվում է հուշարձանները վանդալիզմի ենթարկելու մեջ: Ում է փորձել այս քայլով բան ապացուցել 41-ամյա տղամարդը, դժվար չէ կռահել: Փաստ է մեկ բան՝ նա այս պահին ձերբակալված է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՓՇՏԱԿԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ նախկինում բազմիցս դատապարտված Ս.Ա.-ն, հանցավոր համաձայնության գալով երկու այլ անձանց հետ, 2025 թվականի սեպտեմբերի 6-ին ապօրինի մուտք են գործել Ջովունի բնակավայրում գտնվող ընկերության վարչական շենք, որտեղ մետաղական լինգերի եւ պտուտակահանի գործադրմամբ բացելով աշխատասենյակներից մեկում տեղադրված մետաղական պահարանը՝ գաղտնի հափշտակել են 116 մլն ՀՀ դրամ, 10 հզր ԱՄՆ դոլար, որսորդական հրացան՝ իր փամփուշտներով, որից հետո ավտոմեքենայով հեռացել են դեպքի վայրից: Նախաքննության ընթացքում առաջ քաշված մի շարք վարկածների ստուգման արդյունքում, հավաքված ապացույցներով, այդ թվում՝ առերեւույթ հանցանք կատարած անձանց կողմից դեպքի վայրում թողնված մետաղական լինգերից եւ պտուտակահանից վերցված նմուշների դատագենետիկական փորձաքննությամբ հաստատվել է նշված գողությանը Ս.Ա.-ի մասնակցության հանգամանքը: Հայտնաբերվել է նաեւ հանցագործության միջոց ծառայած ավտոմեքենան: Բացի այդ, իրականացված քննչական գործողությունների ընթացքում փաստական տվյալներ են ձեռք բերվել նաեւ 2022 թվականի հունիսի 11-ին Արմավիր քաղաքի ավտոտեխսպասարկման կայանից 1 մլն 265 հզր ՀՀ դրամ գումարի չափով գողության դեպքին Ս.Ա.-ի առնչության վերաբերյալ: Ս.Ա.-ի նկատմամբ հսկող դատախազի որոշմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 4-րդ կետերով, 3-րդ մասի 4-րդ կետով (գողությունը) եւ 338-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մասեր հափշտակելը): Նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Քրեական վարույթի նախաքննության ընթացքում արգելադրվել է Ս.Ա.-ի ողջ գույքը, այդ թվում՝ հանցագործության կատարումից անմիջապես հետո նրա կողմից Երեւան քաղաքի Դավթաշեն թաղամասում ձեռք բերված բնակարանը: Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԿԱՊԵԼ ԵՆ ԱԹՈՌԻՆ, ԻՍԿ ԿՆՈՋԸ՝ ՏԱՐԵԼ

Հունիսի 8-ին ավազակային հարձակման դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 03:40-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւանի քրեական վարչությունում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ Նոր Խճուղում օտարերկրյա քաղաքացի կա արյունոտ վիճակում, եւ հավանաբար նրան կապել ու թալանել են: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, մեկնել է Երեւանի քրեական վարչության օպերատիվ խումբը, որտեղ պարզվել է, որ ստացված օպերատիվ տեղեկությունները հավաստի են, իսկ նշված քաղաքացին հանդիսանում է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի 37-ամյա Սոբհան Ջ-ն: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ տղամարդը ոստիկաններին հայտնել է, որ հունիսի 7-ին ժամը 18:00-ի սահմաններում իր կնոջ ծանոթ պարսիկի մի աղջիկ իրենց հրավիրել է Երեւան քաղաքի Ջահուկյան փողոցի տներից մեկը ու երբ իրենք մոտեցել են նշված հասցե, տան մուտքի մոտ 4 տղամարդ եւ 1 կին իրեն եւ կնոջը հարվածել են գցել գետնին, կապել աթոռին կպչուն ժապավեններով եւ դանակի սպառնալիքով պահանջել են գումար, տան սեփականության փաստաթղթերը, որպեսզի փոխի իրենց անունով, որից հետո նրանց պահանջով ստորագրել է փաստաթուղթ, որի միջոցով նրանք կարող էին կանխիկացնել 160 հազար ԱՄՆ դոլար գումար, ինչից հետո վերցրել են իր կողմից վարձակալած Բաբայան փողոց շենքերից մեկի բնակարաններից մեկի բանալին եւ իր կնոջ՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի 36-ամյա Ֆառզանեհ Ա.-ի կամքին հակառակ վերջինիս տեղափոխել են անհայտ ուղղությամբ: Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ Երեւանի քրեական ոստիկանների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նշված արարքը կատարել է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի՝ 39-ամյա Ռեզա Մոհամմադ Ջ.-ն: Դեպքի փաստով ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քր. օր-ի 191 հոդ. 2-րդ մասի 5-րդ եւ 8-րդ կետերի, 192 հոդ. 2-րդ մասի 5-րդ, 8-րդ եւ 9-րդ կետերի եւ 252 հոդ. 3-րդ մասի 4-րդ կետի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթը: Ֆոտոլրագրողի տեղեկություններով քրեական ոստիկանների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Ֆառզանեհ Ա-ն հայտնաբերվել եւ ներկայացվել է քննչական բաժին:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ

ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանի որդու՝ Արտյոմ Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը, հայտարարվել հետախուզում: Հիշեցնենք, որ ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանի որդուն՝ Արտյոմ Խաչատրյանին, նախաքննական մարմինը օրեր առաջ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն էր ներկայացրել դատարան: Հիշեցնենք, որ հունիսի 5-ին ՔԿ-ն հայտնել էր պաշտոնեական լիազորությունների չարաշահման եւ փողերի լվացման քրեական վարույթի մասին, որտեղ մեղադրյալի կարգավիճակ ունի Արմեն Աշոտյանը: ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանի որդին՝ Արտյոմ Խաչատրյանը, եւս անցնում է պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, դրա օժանդակության, խմբի կողմից առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման եւ դրանց օժանդակության համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով: Նրա նկատմամբ դեռ խափանման միջոց չի ընտրվել: Հունիսի 5-ին ընտրակաշառք տալու, ստանալու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում 2 ամսով կալանավորվել է նաեւ Պետական գույքի կառավարման վարչության նախկին պետ Արման Սահակյանը: Նա այս պահին կալանքը կրում է Արմավիրի քրեակատարողական հիմնարկում: Հունիսի 5-ին Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում 1 ամսով կալանավորվել է նաեւ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախկին նախարար Գագիկ Բեգլարյանը: Ըստ կոմիտեի՝ վերջինս մեղադրվում է պաշտոնեական լիազորությունների չարաշահման եւ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման մեջ: Նա այս պահին կալանքը կրում է ԱԱԾ մեկուսարանում:

Ք. Մ.

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ

Միքայել Սմբատի Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ N զորամասի ուսումնական կենտրոնի պայմանագրային զինծառայող, իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող Վահան Ստեփանյանից ընդունել է ընտրակաշառք ստանալու առաջարկ՝ իր եւ իր ընտանիքի՝ ընտրական իրավունք ունեցող անդամների կողմից ՀՀ նախագահի 2026 թվականի փետրվարի 6-ի թիվ ՆՀ-21-Հ հրամանագրով 2026 թվականի հունիսի 7-ին նշանակված Ազգային Ժողովի 9-րդ գումարման ընտրություններին «Ուժեղ Հայաստան» կուսակցության օգտին քվեարկելու համար:

● *Հանրապետությունում հունիսի 12-ից 15-ը հայտնաբերվել է 18 հետախուզվող, կամավոր ներկայացել է 1-ը:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ



Դիլիջանի համայնքապետարանը Երեւանի քաղաքացիական դատարան հայցադիմում է ներկայացրել՝ խնդրելով լուծել Դիլիջան համայնքի եւ Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում գրանցված «Դիլիջան Դեւելոփմենթ Քամփնի» ՓԲ ընկերության միջեւ 2018թ. սեպտեմբերի 7-ին կնքված քաղաք Դիլիջան, Գետափնյա 19/4 հասցեում գտնվող 4572.1 քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող 11-003-0305-0049 ծածկագրով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 8 պայմանագիրը եւ անվավեր ճանաչել վերը նշված հողամասի նկատմամբ «Դիլիջան Դեւելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ի իրավունքի պետական գրանցումը: Իմ տեղեկություններով՝ «Դիլիջան Դեւելոփմենթ Քամփնի» ՓԲԸ սեփականատերը հայտնի գործարար Ռուբեն Վարդանյանն է, որը գտնվում է Բաքվի բանտում: Վարդանյանի ընկերությանն է կառուցապատման իրավունքով պատկանում Դիլիջան քաղաքի կենտրոնում գտնվող արհեստական լճակի շրջակա տարածքը: Ռուբեն Վարդանյանն իր ընտանիքով միլիոնավոր դոլարների ներդրում է կատարել Դիլիջան քաղաքի զարգացման համար, սակայն Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանն անտեսում է այդ փաստը: Դիլիջանի համայնքապետարանը Ռուբեն Վարդանյանին հետ կապակցված այլ ընկերության՝ «Դիս Փրոփերթիսի» դեմ քաղաքացիական հայց է ներկայացրել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան: Համայնքապետարանը հայցով դատարանից խնդրել է «Դիս Փրոփերթիս» բարեգործական հիմնադրամից հօգուտ Դիլիջանի համայնքապետարանի բռնագանձել 63 միլիոն 227 հազար 898 դրամ՝ որպես վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքների գումար, ինչպես նաեւ այդ հիմնադրամից հօգուտ համայնքապետարանի բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը՝ 1 միլիոն 896 հազար 837 դրամի չափով: Հայցը փետրվարի 2-ին ընդունվել է դատարանի վարույթ, ներկայացվել է դիմումմիջնորդություն լրացուցիչ վճիռ կայացնելու վերաբերյալ: «Դիս Փրոփերթիսը» հայաստանյան բարեգործական հիմնադրամ է, որն առնչվում է Ռուբեն Վարդանյանի հետ: Այդ կազմակերպությունը սերտորեն համագործակցում է «Հայաստանի Զարգացման Նախաձեռնություններ» հիմնադրամի հետ: Դիլիջանի միջազգային դպրոցի գործունեությունն ապահովում են «Դիլիջան Ինտերնեյշնլ Սքուլ օֆ Արմենիա» եւ «Դիս Փրոփերթիս» բարեգործական հիմնադրամները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՄՆ-ԻՐԱՆ

ՆԱՎԹԻ ԳՆԵՐԸ ԿՏՐՈՒԿ ՆՎԱԶԵԼ ԵՆ

Նավթի համաշխարհային գները նվազել են այն բանից հետո, երբ Պակիստանը, որը միջնորդում է ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ բանակցություններին, հայտարարեց շրջանակային համաձայնագրի մասին: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը նշել է, որ համաձայնությունը նախատեսում է նաեւ ռազմավարական նշանակություն ունեցող Հորմուզի նեղուցի վերաբացումը:

Brent տեսակի նավթի գինը երկուշաբթի օրը նվազել է 4,3 տոկոսով՝ հասնելով մեկ բարելի դիմաց 83,55 դոլարի, իսկ ամերիկյան WTI տեսակի նավթը էժանացել է 4,9 տոկոսով՝ մինչեւ 80,74 դոլար:

Պակիստանի վարչապետ Շեհբազ Շարիֆը հայտնել է, որ համաձայնագրի պաշտոնական ստորագրումը նախատեսված է հունիսի 19-ին՝ Շվեյցարիայում:

Իրանի փոխարտգործնախարար Քազեմ Ղարիբաբադին պետական հեռուստատեսության եթերում հաստատել է, որ ԱՄՆ-ի հետ համաձայնագիրը վերջնականացվել է, մինչդեռ Թրամփը սոցիալական ցանցերում գրել է. «Թող նավթը հոսի»:

Սակայն Vanda Insights վերլուծական ընկերության հիմնադիր Վանդանա Հարին զգուշացրել է, որ համաձայնագրի մանրամասների բացակայությունը կարող է շուկաներում պահպանել անորոշությունը եւ տատանումները:

Հորմուզի նեղուցը փաստացի փակվել էր այն բանից հետո, երբ փետրվարի 28-ին ԱՄՆ-ն եւ Իսրայելը հարվածներ հասցրին Իրանի տարածքին: Այդ ընթացքում Թեհրանը սպառնացել էր թիրախավորել նեղուցով անցնող նավերը: Հորմուզի նեղուցով սովորաբար իրականացվում է աշխարհում սպառվող նավթի եւ հեղուկացված բնական գազի շուրջ 20 տոկոսի փոխադրումը, ուստի դրա փակումը լուրջ ազդեցություն էր ունեցել համաշխարհային էներգետիկ շուկաների վրա:

Պատերազմից առաջ Brent նավթի գինը կազմում էր մոտ 70 դոլար մեկ բարելի դիմաց, սակայն հակամարտության ընթացքում այն հասել էր շուրջ 120 դոլարի: Միեւնույն ժամանակ փորձագետները զգուշացնում են, որ նեղուցով նավթափոխադրումները չեն վերականգնվի անմիջապես: Lipow Oil Associates խորհրդատվական ընկերության նախագահ Էնդրյու Լիպովի խոսքով՝ նախ անհրաժեշտ է ականազերծել ջրային տարածքը, ինչը կարող է տեւել մի քանի շաբաթից մինչեւ վեց ամիս: Նա նաեւ նշել է, որ Հորմուզի նեղուցով անցնելու հերթի են սպասում մեծ թվով նավթատարներ, իսկ նավթի արդյունահանման եւ բեռնման գործընթացների ամբողջական վերականգնումը կարող է տեւել շաբաթներ:

ԱՄՆ ռազմածովային ուժերի պաշտոնաթող փոխծովակալ Մարկ Մոնթգոմերին BBC-ին ասել է, որ իրավիճակի ամբողջական կարգավորումը մեկ օրվա հարց չէ եւ նորմալ աշխատանքային ռեժիմին վերադառնալու համար կարող է պահանջվել մինչեւ 45 օր: Մինչդեռ ասիական ֆոնդային շուկաները դրական են արձագանքել համաձայնագրի մասին լուրերին:

Ճապոնիայի Nikkei 225 ինդեքսն աճել է 4,7 տոկոսով, իսկ Հարավային Կորեայի Kospi ինդեքսը՝ ավելի քան 5,2 տոկոսով:

Վերլուծաբանների գնահատմամբ՝ հատկապես Ասիայի երկրներն են շահագրգռված Հորմուզի նեղուցի վերաբացմամբ, քանի որ տարածաշրջանը մեծապես կախված է Մերձավոր Արեւելքից ներմուծվող նավթից եւ հեղուկացված բնական գազից:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԱՅՑ ԲԱՔՈՒ

Ռուբեն Վարդանյանի կինը՝ Վերոնիկա Զոնաբենդը, հայտարարել է նոր մարդասիրական նախաձեռնության մասին, որի շրջանակում մտադիր է կազմակերպել կանանց միջազգային մարդասիրական պատվիրակության այց Բաքու:

Ստորեւ ներկայացվում է Վերոնիկա Զոնաբենդի հայտարարությունը. «2023թ. սեպտեմբերից իմ ամուսինն ապօրինի պահվում է Ադրբեջանում: Նա ավելի քան երեք տարի զրկված է իր ընտանիքին, հարազատ մարդկանց տեսնելու հնարավորությունից: Այս ընթացքում ծնվել են նրա թոռնիկները, որոնց նա երբեք չի պահել իր գրկում: Ես սա գրում եմ որպես Ռուբեն Վարդանյանի կին, որպես մայր, որպես տատիկ եւ որպես մարդ, որն այլեւս չի կարող լուռ սպասել՝ հետեւելով տարբեր կառույցների բացատրություններին, թե ինչու չեն կարող գործել կամ ինչու չպետք է գործեն: Խոսքը միայն Ռուբենի մասին չէ: Եւս 18 հայ մնում է ադրբեջանական կալանքի տակ: Նրանցից ոմանք վեց տարի չեն տեսել իրենց հարազատներին, նամակներ չեն ստացել, չեն լսել նրանց ձայնը կամ ձեռքում չեն պահել իրենց երեխաների ու թոռների լուսանկարները: Իրենց ընտանիքների համար նրանք «օրակարգային հարց», «քաղաքական հարց» կամ «բարդ դիվանագիտական խնդիր» չեն: Նրանք ամուսիններ են, հայրեր, պապիկներ, որդիներ եւ եղբայրներ: Նրանց միակ «մեղքն» այն է, որ ցանկացել են ապրել իրենց նախնիների հողում, խոսել իրենց մայրենի լեզվով եւ պահպանել իրենց մշակույթը: Այսօր չափազանց հաճախ է թվում, թե նրանց ճակատագիրն իրականում քչերին է հուզում՝ բացի իրենց ընտանիքներից:

Այս ողջ ընթացքում նրանց ճակատագրի շուրջ շարունակվում են անվերջ քննարկումները՝ մեխանիզմների, ընթացակարգերի, լիազորությունների եւ քաղաքական հանգամանքների մասին: Մինչ ոմանք զբաղված են իրենց քաղաքական դիրքերը պահպանելով, մյուսները, գտնվելով անազատության մեջ, տարիներ շարունակ սպասում են գոնե մեկ լուսանկարի, մեկ նամակի կամ հարազատներից մի քանի խոսքի:

Ադրբեջանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) գրասենյակի փակվելուց ի վեր հայ բանտարկյալների ընտանիքները փաստացի զրկված են իրենց հարազատների հետ կանոնավոր, մարդասիրական անկախ կապից: Միջազգային այն մեխանիզմները, որոնք նման իրավիճակներում պետք է պաշտպանեն մարդուն, գործնականում չեն աշխատում:

Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանը հայտարարել է, որ այս հարցը իր իրավասությունների շրջանակում չէ: Իսկ Ադրբեջան կատարած այցերի ընթացքում իրենց իսկ երկրի պետական պատվիրակությունները հնարավորություն չեն գտնում այցելելու այդ մարդկանց, հանդիպելու նրանց, տեղում ծանոթանալու պահման պայմաններին եւ գնահատելու նրանց առողջական վիճակը: Ռուբենի խնդրանքով ես մտադիր եմ կազմակերպել կանանց միջազգային մարդասիրական պատվիրակություն, որը մոտ ապագայում կմեկնի Բաքու:

Դիմում եմ Ադրբեջանի օմբուդսմեն տիկին Սաբինա Ալիեւային եւ նրա գրասենյակին՝ խնդրելով աջակցել այդ պատվիրակության այցին Բաքու, պաշտոնական հանդիպմանը, Ումբակիի քրեակատարողական համալիրում պահվող հայ բանտարկյալներին տեսակցելուն եւ նրանց ընտանիքներից ծանրոցների, լուսանկարների, նամակների եւ օրենքով թույլատրված անձնական իրերի պաշտոնական փոխանցմանը: Գերիների համար սա հիշեցնում է, որ նրանք մոռացված չեն: Ես հավատում եմ, որ կարող ենք մարդ մնալ միայն այն դեպքում, եթե թույլ չտանք, որ անտարբերությունը դառնա նորմ, սովորական երեւույթ, եթե նույնիսկ ամենածանր հանգամանքներում շարունակենք պահպանել կարեկցանքը, սերը եւ գթասրտությունը:

Ուզում եմ հավատալ, որ նույնիսկ այնտեղ, որտեղ քաղաքականությունը ոչնչացնում է վստահությունը, դեռ մնում է մարդկային քայլի հնարավորություն: Առաջնորդներն ու հզոր պետությունները պատմության մեջ հիշվում են ոչ միայն իրենց հաղթանակներով, այլեւ իրենց իշխանության տակ հայտնված մարդկանց հանդեպ ցուցաբերած ողորմածությամբ: Հենց այդպիսի արարքներն են մնում պատմության մեջ:

Այս նախաձեռնությունը քաղաքական ակցիա չէ: Սա բանտարկյալների ու նրանց ընտանիքների, նրանց ճակատագրով մտահոգ մարդկանց միջեւ առնվազն նվազագույն կապ վերականգնելու փորձ է: Այդ կապն օգնում է մարդուն պահպանել իր արժանապատվությունը, առանց որի անհնար է խոսել հարեւան ժողովուրդների միջեւ իրական եւ տեւական խաղաղության մասին: Այս առումով, հաջորդ երկու շաբաթների ընթացքում մենք հավաքում ենք աջակցության նամակներ եւ լուսանկարներ Ադրբեջանում պահվող հայ բանտարկյալների համար, որոնք ընտանիքների ծանրոցների հետ կփորձենք նրանց փոխանցել:

Նամակները հնարավոր է ուղարկել հետեւյալ հասցեով՝ letters@freearmenianprisoners.com: Subject հատվածում խնդրում ենք գրել Letter of Support - Armenian Detainees: Եթե նամակն ուղղված է կոնկրետ անձի, խնդրում ենք ավելացնել նրա անունը Subject հատվածում:

Պատվիրակության կազմում ընդգրկված կանանց անունները կհրապարակվեն լրացուցիչ:

Վերոնիկա Զոնաբենդ»:

● *ՀՀ-ում անցած 3 օրում գրանցվել է 31 ավտովթար. 44 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ

ՎԵՐԱՆԱՅԵԼ Է ԱՄՆ ԴՈԼԱՐՈՎ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Աշխարհում միլիոնավոր մարդիկ ամեն ամիս խնայում են իրենց եկամտի մի մասը՝ նախատեսված մեծ գնումների, հանգստի կազմակերպման կամ պարզապես ֆինանսական ապահովության բարձիկ ստեղծելու նպատակով:

Չնայած գործիքների բազմազանությանը, մինչ օրս ավանդը շարունակում է մնալ խնայողությունների ամենապարզ, հասկանալի եւ տարածված եղանակներից մեկը ողջ աշխարհում: Այն թույլ է տալիս ոչ միայն խնայել եւ կուտակել միջոցներ, այլեւ ստանալ տոկոսային եկամուտ՝ միաժամանակ պահպանելով գումարին հասանելիությունը նույնիսկ մինչեւ ավանդի ժամկետի ավարտը:

Այս տեսանկյունից Կոնվերս Բանկի «Կարաս» եւ «Պրոգրես» ավանդատեսակները կարող են դառնալ խնայողությունների կառավարման արդյունավետ գործիք այն մարդկանց համար, ովքեր ցանկանում են ոչ միայն խնայել, կուտակել միջոցներ, այլեւ ստանալ տոկոսային եկամուտ՝ օգտվելով ավելի ճկուն պայմաններից:

Կոնվերս Բանկը վերանայել է «Կարաս» եւ «Պրոգրես» ավանդատեսակների պայմանները՝ հաճախորդներին առաջարկելով ԱՄՆ դոլարով ներդրումների առավել բարձր տոկոսադրույքներ:

Թարմացված պայմանները հնարավորություն են տալիս ոչ միայն ստանալ ավելի բարձր եկամուտ, այլեւ ընտրել տոկոսային եկամտի ստացման առավել նախընտրելի տարբերակը՝ օգտվելով խնայողությունների կառավարման ավելի ճկուն հնարավորություններից:

«Կարաս» ավանդատեսակը հասանելի է ՀՀ դրամով եւ ԱՄՆ դոլարով, իսկ «Պրոգրես»-ը՝ նաեւ Եվրոյով: Ավանդ ներդնել հնարավոր է ինչպես Converse Mobile հավելվածի միջոցով, այնպես էլ Բանկի մասնաճյուղերում:

Converse Mobile հավելվածում ներդրում կատարելու համար անհրաժեշտ է ընտրել «Ավանդներ» բաժինը, ապա՝ համապատասխան ավանդատեսակը եւ հետեւել հրահանգներին: Ընդ որում, հաճախորդները կարող են ցանկացած պահի օգտվել ավանդից՝ անհրաժեշտության դեպքում դադարեցնելով այն նաեւ մասնակիորեն: Հասանելի է նաեւ համալրման հնարավորությունը, ինչը հատկապես գործնական տարբերակ է նրանց համար, ովքեր նախընտրում են գումար կուտակել պարբերական, օրինակ՝ ամսական խնայողությունների ձեւաչափով:

Մանրամասն՝ 010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

SUEBAR

ՉԻՐ ԵՎ ԿՈՆՖԵՏՆԵՐ՝ ԱՌՈՂՋ ՔԱՂՑՐԱՎԵՆԻՔ

Արդեն երեք տարի Արարատի մարզի Քաղցրաշեն գյուղում Սյուզաննա Բարսեղյանն արտադրում է բնական անուշահամ չրեր եւ հատուկ բաղադրատոմսով չրահունց կոնֆետներ: Իր ընկերությունը Սյուզաննան կոչել է Suebar՝ իր անվան եւ ազգանվան առաջին վանկերով:

Հատուկ բաղադրատոմսով եւ առողջ քաղցրավենիք նախընտրողների համար պատրաստվող կոնֆետների գրեթե ամբողջ չրային հումքը Սյուզաննան մշակում է սեփական այգում: Ծիրանի, խնձորի, թզի, սալորի ու դեղձի չրերից պատրաստվող կոնֆետներում որպես քաղցրացուցիչ օգտագործվում է բնական մեղրը:

Սյուզաննան օգնում է նաեւ համագյուղացիներին. բնական չրերի համար անհրաժեշտ մնացյալ մրգերը ձեռք է բերում հարազատ Քաղցրաշեն գյուղից:

Suebar-ն Ակբա Ֆեդերացիայի եւ Իմփաքթ Հաբի ֆելոուշիփի մասնակիցներից է, որի շնորհիվ Սյուզաննան բիզնեսի զարգացման համար մեկ տարի մասնակցել է դասընթացների եւ խորհրդատվություններ ստացել տարբեր ոլորտների մենթորներից:

«Կոնֆետների գաղափարը առաջացավ այն պահից, երբ երեխաներս որոշեցին հրաժարվել շաքարից: Մեր տան եղած միակ քաղցրը մեր չրերը դարձան. փորձեցինք չրերով ստանալ կոնֆետ ու ստացվեց: Այսպես ստեղծվեց մեր բիզնես գաղափարը: Կոնֆետների պատրաստման մեջ օգտագործում ենք մի քանի պատումներ՝ բազուկ, կոկոսի փաթիլներ, քունջութ, ընկույզ, նարնջի փոշի, պիստակ, դդմի կորիզ եւ նանա: Մեր բիզնեսում եկավ մի ժամանակ, երբ հասկացանք, որ մեզ պակասում են գիտելիքները: Տեղեկացանք Ակբա Ֆեդերացիայի եւ Իմփաքթ Հաբի համատեղ ծրագրի մասին, որին մասնակցեցինք ու մեկ տարվա ընթացքում տարբեր մենթորների շնորհիվ ունեցանք գիտելիքներ, որոնք կիրառում ենք մեր բիզնեսում: Նշեմ նաեւ, որ ֆելոուշիփի հաղթող ենք, ստացել ենք դրամաշնորհ, որը կիրառելու ենք մեր բիզնեսի զարգացման համար»,- նշել է Suebar-ի հիմնադիր Սյուզաննա Բարսեղյանը:

Սյուզաննա Բարսեղյանի առաջիկա նպատակն է ընդլայնել Suebar-ն ու հիմնադրել սեփական բրենդային խանութը, որտեղ ներկայացված կլինեն բնական թարմ չրեր եւ մշտապես նորացվող չրահունց կոնֆետների լայն տեսականի:

Suebar-ի քաղցրավենիքները հնարավոր է պատվիրել հետեւյալ հեռախոսահամարով՝ +37455330727:

Ակբա Ֆեդերացիան Ակբա բանկի միակ նշանակալից մասնակիցն է, բանկի բաժնետոմսերում ունի ավելի քան 75 տոկոս մասնաբաժին: Ակբա բանկում ունեցած մասնակցության շնորհիվ Ակբա Ֆեդերացիան նպաստում է Հայաստանի ողջ տարածքում գյուղատնտեսության, գյուղական շրջաններում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը, համայնքների զարգացմանը, գյուղական շրջաններում եւ համայնքներում բիզնես միջավայրի աշխուժացմանն ու զարգացմանը, նշված ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր անձի բարեկեցության աճին:

ՍԵՎ ԾՈՒԿԱՅԻ ՍՏՎԵՐԸ

Վերջին տարիներին Հայաստանը հետեւողականորեն խստացնում է ծխախոտի դեմ պայքարի քաղաքականությունը՝ բարձրացնելով հարկերը, սահմանելով գովազդի եւ սպառման սահմանափակումներ: Սակայն առաջիկա հարկային բարձրացումները նոր հարց են առաջացնում՝ արդյո՞ք սա կխթանի ապօրինի ծուկայի աճը եւ ինչ հետեւանքներ կունենա հանրային առողջության համար:



Ըստ միջազգային տվյալների՝ Հայաստանում ծխելը շարունակում է մնալ առողջապահական լուրջ խնդիր: Մոտ 500,000 չափահաս մարդ ծխում է:

Հայաստանում ապօրինի ծխախոտի շուկան նոր երեւույթ չէ: Միայն վերջին մեկ տարվա ընթացքում պետական մարմինները մի քանի խոշոր դեպքեր են բացահայտել:

Բացի մաքսանենգությունից, իրավապահները բացահայտել են նաեւ մեծածավալ անօրինական բաշխման ցանցեր, որտեղ վաճառքը կազմակերպվում էր անգամ առցանց հարթակների միջոցով եւ ներառում էր ֆինանսական հոսքեր՝ մինչեւ տասնյակ միլիոն դրամի չափով:

Տնտեսական տեսանկյունից՝ծխախոտի հարկերի բարձրացումը բերում է գների աճի: Սա հիմնականում ունի դրական նպատակ՝ նվազեցնել սպառումը: Սակայն փորձը ցույց է տալիս, որ կա նաեւ հակառակ կողմը:

Բարձր հարկերը նվազեցնում են օրինական շուկայի հասանելիությունը եւ կարող են ստեղծել շահութաբեր հնարավորություններ մաքսանենգների համար:

Ապօրինի շուկան հատկապես գրավիչ է դառնում այն դեպքում, երբ գների տարբերությունը զգալի է:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ ապօրինի ծխախոտը պարզապես տնտեսական խնդիր է: Իրականում այն ունի նաեւ լուրջ առողջապահական հետեւանքներ:

Ապօրինի ծխախոտը հաճախ վաճառվում է ավելի ցածր գնով եւ առանց վերահսկողության, ինչի արդյունքում այն հասանելի է դառնում նաեւ անչափահասներին: Այս արտադրանքները չեն համապատասխանում որակի եւ անվտանգության պահանջներին՝ չկան առողջապահական նախազգուշացումներ, անհայտ են բաղադրիչները: Ապօրինի շուկան նվազեցնում է միջին գինը շուկայում, ինչը կարող է ավելացնել ծխախոտի ընդհանուր սպառումը: Այս ամենը հակասում է պետության առողջապահական նպատակներին: Ապօրինի ծխախոտը հարվածում է նաեւ պետական բյուջեին՝ կորում են հարկային մուտքերը եւ աճում են ստվերային ֆինանսական հոսքերը:

Բացի այդ, ինչպես ցույց են տալիս միջազգային փորձը եւ զեկույցները, նման շուկաները հաճախ կապված են կազմակերպված հանցավորության հետ եւ կարող են օգտագործվել այլ ապօրինի գործունեության ֆինանսավորման համար:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԲԱՑ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ

ԵՎՐՈՊԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Ըստ Euronews-ի՝ Դանիայի Orhnus քաղաքում գտնվող Den Gamle By թանգարանը դարձել է European Museum of the Year Award 2026 մրցանակի դափնեկիրը, որը համարվում է եվրոպական թանգարանային ոլորտի ամենահեղինակավոր պարգևներից մեկը, հայտնում է news.am-ը:

Մրցանակը հանձնվել է Բիլբաոյում կայացած արարողության ժամանակ: Ժյուրին նշել է, որ թանգարանը սահմանել է «նոր չափանիշ նորարարության եւ հանրային նշանակության համար» եւ ցուցադրում է այցելուների հետ փոխգործակցության բարձր մակարդակ: Den Gamle By-ն բաց երկնքի տակ գտնվող քաղաքային պատմության թանգարան է, որը այցելուներին հնարավորություն է տալիս հետեւել առօրյա կյանքի զարգացմանը ավելի քան 400 տարվա ընթացքում: Ցուցադրությունները ընդգրկում են XVII դարից մինչեւ 2014 թվականն ընկած ժամանակահատվածը եւ վերաստեղծում են տարբեր պատմական դարաշրջաններ՝ ինտերակտիվ ցուցահանդեսների եւ վերակառուցված քաղաքային թաղամասերի միջոցով:

Ըստ ժյուրիի ներկայացուցիչների, թանգարանը հաջողությամբ համադրում է պատմական ժառանգությունը ժամանակակից թեմաների քննարկման հետ, ներառյալ միգրացիան, կայուն զարգացումը, սոցիալական արդարությունը եւ հավասարության հարցերը:

Փորձագետները հատուկ ուշադրություն են դարձրել թանգարանի բնապահպանական նախաձեռնություններին: Դրանց թվում են բույսերի հին տեսակների պահպանությունը, այգեգործության վերաբերյալ կրթական ծրագրերը, ինչպես նաեւ հագուստի եւ շենքերի վերանորոգման վարպետության դասերը՝ որպես կայուն սպառման հայեցակարգի մաս: Ժյուրին նաեւ նշել է կամավորների եւ տեղի բնակիչների ակտիվ մասնակցությունը թանգարանի աշխատանքներին, ինչի շնորհիվ հաստատությունը դարձել է տարածաշրջանի հասարակական կյանքի կարեւոր մաս:

Գլխավոր մրցանակից բացի՝ հանձնվել են նաեւ այլ պարգեւներ: Այսպես, Լոնդոնյան Young V&A-ն ստացել է Եվրոպայի խորհրդի թանգարանային մրցանակը, իսկ Լահթիում գտնվող Lahti Museum of Visual Arts Malva-ն արժանացել է ճանաչման բնապահպանական կայունության ոլորտում ձեռքբերումների համար:

Կազմակերպիչները նշել են, որ 2026 թվականի դափնեկիրներին միավորում է հաստատված մոտեցումները վերահմաստավորելու ձգտումը, բարդ պատմական թեմաների հետ աշխատելու պատրաստակամությունը եւ թանգարանների հանրային դերի ուժեղացումը:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կաբո Վերդեի, Կյուրասաոյի, Ուզբեկստանի, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության, Հայիթիի, Ալժիրի, Թունիսի, Մարոկկոյի, Եգիպտոսի, Գանայի, Սենեգալի, Հարավային Աֆրիկայի եւ Կոտ դ'Իվուարի ազգային հավաքականները համատեղ հայտարարություն են տարածել՝ առնագանգելով ՈՒԵՖԱ-ի նախագահ Ալեքսանդր Չեֆերինի քննադատությանը Աշխարհի առաջնության ընդլայնման վերաբերյալ: Նա նախկինում հայտարարել էր, որ Աշխարհի առաջնության ընդլայնումը մրցաշարի խաղերը դարձնում է պակաս կարեւոր եւ գրավիչ, գրում է armsport-ը:

«Մենք հարգանքով, բայց վճռականորեն մերժում ենք այս մեկնաբանությունները: Մեր երկրների համար չկան անկարեւոր Աշխարհի գավաթի խաղեր: Կաբո Վերդեի, Կյուրասաոյի եւ Ուզբեկստանի համար Աշխարհի գավաթի խաղարկությանը մասնակցելը պատմական նվաճում է եւ սերունդների երազանքի իրականացում: Կոնգոյի եւ Հայիթիի նման երկրների համար երկարատեւ ընդմիջումից հետո ֆուտբոլի գլխավոր ասպարեզ վերադառնալը հատուկ նշանակություն ունի միլիոնավոր երկրպագուների համար, ովքեր տարիներ շարունակ, իսկ որոշ դեպքերում՝ տասնամյակներ շարունակ սպասել են այս պահին: Ասել, որ այս խաղերը ինչոր կերպ պակաս կարեւոր են, խորապես հիասթափեցնող է եւ անտեսում է խաղացողների, մարզիչների, ակումբների եւ ամբողջ աշխարհի երկրպագուների ջանքերը, զոհողությունները եւ ձգտումները: Յուրաքանչյուր որակավորման հետեւում կանգնած են տարիների աշխատանք եւ ներդրումներ: Յուրաքանչյուր ազգային հավաքականի հետեւում կանգնած են ամբողջ համայնքներ եւ միլիոնավոր մարդիկ, ովքեր ֆուտբոլը համարում են հպարտության, հույսի եւ միասնության աղբյուր:

Ֆուտբոլը չի պատկանում ազգերի ընտրյալ խմբի: Դրա ուժը կայանում է իր համընդհանրության մեջ: Աշխարհի գավաթը աշխարհի ամենամեծ ֆուտբոլային մրցաշարն է հենց այն պատճառով, որ այն միավորում է տարբեր մշակույթներ, տարբեր պատմություններ եւ տարբեր ֆուտբոլային ուղիներ: Շատ երկրների համար Աշխարհի գավաթին մասնակցելը ավելին է, քան պարզապես մարզական նվաճում: Այն մի պահ, որը ոգեշնչում է մի ամբողջ սերնդի, արագացնում է ֆուտբոլի զարգացումը եւ ստեղծում է ողջ կյանքի համար հիշողություններ:

Մենք հավատում ենք, որ որակավորված յուրաքանչյուր երկիր արժանի է հարգանքի: Յուրաքանչյուր թիմ իրավացիորեն վաստակել է իր տեղը: Յուրաքանչյուր երկրպագու իրավունք ունի երազելու: Յուրաքանչյուր խաղ կարեւոր է աշխարհի միլիոնավոր մարդկանց համար:

Հետեւաբար, մենք մերժում ենք ՈՒԵՖԱ-ի նախագահի մեկնաբանությունները եւ վերահաստատում ենք մեր համոզմունքը, որ ֆուտբոլը պետք է շարունակի զարգանալ՝ ստեղծելով հնարավորություններ, ոգեշնչելով նոր սերունդներին եւ ամրապնդելով մեր խաղի իսկապես գլոբալ բնույթը: Յուրաքանչյուր թիմ իրավացիորեն որակավորվել է: Յուրաքանչյուր խաղ կարեւոր է»,-մեջբերել է հրապարակված հայտարարությունը լրագրող Բեն Ջեյքոբսը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

UFC-ի կիսամիջին քաշային կարգի (մինչեւ 77 կգ) գործող չեմպիոն, 34-ամյա Իսլամ Մախաչեւը շնորհավորել է ամերիկացի Ջասթին Գեյջիին՝ «UFC White House - Freedom 250» մրցաշարում Իլիա Թոփուրիայի նկատմամբ տարած հաղթանակի կապակցությամբ, գրում է armsport-ը: Մախաչեւն ընդգծել է, որ ամերիկացի մարզիկն այս չեմպիոնական գոտուն արժանի էր բոլորից շատ: «Նա, ով բարձրացնում է իրեն, կնվաստացվի: Այս խաղում մակարդակներ կան: Շնորհավորում եմ, Ջասթին, դու այս գոտուն արժանի էիր ավելին, քան որեւէ մեկը»,- X սոցիալական ցանցի իր միկրոբլոգում գրել է Մախաչեւը: Ներկա պահին Մախաչեւը UFC-ում ընթանում է 16 անընդմեջ հաղթանակների շարքով: Նրա ընդհանուր ակտիվում կա 28 հաղթանակ եւ ընդամենը 1 պարտություն: Ռուսաստանցին իր վերջին մենամարտում, որը կայացել էր Նյու Յորքում անցկացված UFC 322 մրցաշարում, մրցել էր ավստրալացի Ջեք Դելա Մադալենայի հետ: Այդ դիմակայությունն ավարտվել էր Մախաչեւի հաղթանակով՝ մրցավարների միաձայն որոշմամբ:

ՇԱՀԵԼ Է

UFC-ի թեթեւ քաշային կարգի վարկանիշային աղյուսակի երկրորդ համար Արման Ծառուկյանը 5,7 միլիոն դոլար է շահել «UFC Freedom 250» մրցաշարի գլխավոր մենամարտում Իլիա Թոփուրիայի նկատմամբ ամերիկացի Ջասթին Գեյջիի տարած հաղթանակի արդյունքում: Հայաստանը ներկայացնող մարտիկը մրցաշարի սկսվելուց առաջ սոցիալական ցանցերի իր էջերում տեղեկացրել էր, որ 1 միլիոն դոլարի խաղադրույք է կատարել Գեյջիի հաղթելու վրա: Ըստ սահմանված գործակիցների՝ հավանական շահումի չափը հասնում էր 5,7 միլիոն դոլարի: Վաշինգտոնում՝ Սպիտակ տան Հարավային մարգագետնում անցկացված մենամարտն ավարտվել է Գեյջիի հաղթանակով՝ տեխնիկական նոկաուտով: Հանդիպման երրորդ ռաունդում ամերիկացի մարտիկը նոկդաունի է ենթարկել Թոփուրիային, իսկ չորրորդ ռաունդի ավարտից հետո մենամարտը դադարեցվել է:

Հայտարարություն

Կորել է Փանոս Թերլեմեզյանի անվան պետական քոլեջի «Գեղանկարչություն» բաժնի շրջանավարտ Արփինե Եռանդի Միքայելյանի՝2007 թվականին տրված դիպլոմը: Դիպլոմ՝ ԱԿ № 055702, գրանցման № 849:

Հայտարարություն

Կորել է Երեւանի Ք. Քըրքորյանի անվ. Անգլիական թեքումով տնտեսա-իրավաբանական համալսարանի շրջանավարտ Մհեր Սերգեյի Ջալյանի՝ 2003թ. տրված դիպլոմը «Իրավագիտություն քրեական իրավունք եւ դատավարություն» մասնագիտությամբ: Դիպլոմ ՄԱՏ № 000148, գրանցման № 2241:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հունիսի 25-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Ջ. Պուչչինի - Տուրանդոտ» օպերան:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Պարտապանին պատկանող գույքի վրա ի՞նչ հերթականությամբ է բռնագանձում տարածվում:
Սողոմոն Ղազարյան, 64 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Պարտապանին պատկանող գույքի բռնագանձման հերթականությունը սահմանված է «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով՝

«1. Բռնագանձումն առաջին հերթին տարածվում է պարտապանի դրամական միջոցների վրա:

2. Դրամական միջոցների անբավարարության դեպքում բռնագանձումը տարածվում է պահանջատիրոջ պահանջի ապահովման համար գրավ դրված գույքի, ներառյալ կատարման ենթակա ակտում նախատեսված լինելու դեպքում՝ երրորդ անձ գրավատուի գույքի վրա, այնուհետեւ պարտապանին պատկանող այլ գույքի եւ եկամուտների վրա, բացառությամբ այն գույքի եւ եկամուտների, որոնց վրա օրենքով չի թույլատրվում բռնագանձում տարածել:

3. Եթե այլ բան նախատեսված չէ կատարման ենթակա ակտով, ապա պարտապանի այլ գույքի եւ եկամուտների վրա բռնագանձումը տարածվում է հետեւյալ հերթականությամբ.

1) պարտապան ֆիզիկական անձի պարագայում՝

ա. շարժական գույք,

բ. անշարժ գույք,

գ. եկամուտներ.

2) պարտապան իրավաբանական անձի պարագայում՝

ա. գործունեության մեջ անմիջականորեն չներգրավված շարժական գույք,

բ. գործունեության մեջ անմիջականորեն չներգրավված անշարժ գույք,

գ. պատրաստի արտադրանք,

դ. անավարտ արտադրանք, այդ թվում՝ հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ,

ե. այլ գույք.

3) պարտապան անհատ ձեռնարկատիրոջ պարագայում՝

ա. ձեռնարկատիրական գործունեության մեջ անմիջականորեն չներգրավված շարժական գույք, բացառությամբ անձնական կամ ընտանեկան նպատակներով օգտագործվող գույքի,

բ. ձեռնարկատիրական գործունեության մեջ անմիջականորեն չներգրավված անշարժ գույք, բացառությամբ անձնական կամ ընտանեկան նպատակներով օգտագործվող գույքի,

գ. պատրաստի արտադրանք,

դ. անավարտ արտադրանք, այդ թվում՝ հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ,

ե. ձեռնարկատիրական գործունեության մեջ ներգրավված այլ գույք,

զ. անձնական կամ ընտանեկան նպատակներով օգտագործվող շարժական գույք,

է. անձնական կամ ընտանեկան նպատակներով օգտագործվող անշարժ գույք,

ը. Եկամուտներ (...)»:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով են զորակոչիկները ծառայության նշանակվում ՀՀ ՉՈՒ ԳՇ զինվորական նվագախմբում եւ զորամասերի նվագախմբերում:
Գնել Գալստյան, 44 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. 1. Գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում եւ զորամասերի նվագախմբերում զինվորական ծառայության նշանակելու նպատակով ընտրություն անցկացվում է Գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում եւ զորամասերի նվագախմբերում համալրման ենթակա թափուր հաստիքների առկայության դեպքում:

2. Գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում եւ զորամասերի նվագախմբերում ծառայության նշանակելու ընտրությանը մասնակցում են երաժշտական փողային եւ հարվածային գործիքների տիրապետող մասնագետները: Զորակոչիկների ընտրության նպատակով հանձնաժողովը իրականացնում է լսումներ, որի անցկացման օրվա եւ ժամի վերաբերյալ տեղեկատվությունը, զորակոչի սկսվելու օրվան նախորդող 20-րդ օրից ոչ ուշ, հրապարակվում է պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում եւ լրատվամիջոցներով, որի հիման վրա լսումներին մասնակցելու ցանկություն ունեցող զորակոչիկները կարող են լսումների անցկացման օրվա եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում դիմել Պաշտպանության նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներ: Պաշտպանության նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներն իրականացնում են լսումներին մասնակցելու ցանկություն հայտնած զորակոչիկների հաշվառվում՝ ըստ անհրաժեշտ երաժշտական փողային եւ հարվածային գործիքների տիրապետող մասնագետների հայտ-պահանջարկի, եւ հաշվառված զորակոչիկների անվանացուցակները լսումների օրվանից առնվազն երկու աշխատանքային օր առաջ ուղարկում են գլխավոր շտաբի ռազմանվագախմբային բաժնի պետին: ՀՀ պաշտպանության նախարարի 25.06.2018թ. N 8-Ն հրամանի հավելված 5-ի 2-րդ կետի համաձայն հաշվառված զորակոչիկների առողջական վիճակի հետազոտումը եւ փորձաքննությունն իրականացվում է առաջնահերթ, որի արդյունքներով զորակոչիկի պիտանելիության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է սույն կետում նշված անվանացուցակների հետ միասին:

ՀՀ ՊՆ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Երեւանի մետրոպոլիտենի «Բարեկամություն» կայարանի գետնանցումում անձրեւաջուրն իր սեւ գործն է արել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 4 + 8 + 20 + 25
	Կոտայքի լեռներ	+ 5 + 8 + 20 + 23
	Կոտայքի նախալեռներ	+ 12 + 15 + 24 + 27
	Գեղարքունիք	+ 4 + 8 + 18 + 23
	Լոռի	+ 5 + 9 + 22 + 26
	Տավուշ	+ 8 + 11 + 23 + 26
	Արագածոտնի լեռներ	+ 4 + 8 + 18 + 22
	Արագածոտնի նախալեռներ	+ 11 + 16 + 23 + 28

	Արարատ	+ 14 + 17 + 27 + 29
	Արմավիր	+ 14 + 17 + 29 + 31
	Վայոց ձորի լեռներ	+ 5 + 8 + 19 + 22
	Վայոց ձորի նախալեռներ	+ 12 + 16 + 28 + 31
	Սյունիքի լեռներ	+ 5 + 9 + 18 + 21
	Սյունիքի նախալեռներ	+ 10 + 14 + 20 + 24
	Սյունիքի հովիտներ	+ 15 + 19 + 26 + 29
	Երեւան	+ 15 + 17 + 28 + 30

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*